

Հայ ժողովրդի պատմության ժամանակագրություն

1923 հունվար 23 Ծնվեց հայ դերասան և ռեժիսոր Կարպ Խաչվանքյանը, Ախալցխայում: Իր ստեղծագործական կյանքում նա մարմնավորել է ավելի քան հարյուր կերպար: Երախտագետ հանդիսատեսը նրան մեծարել է և անվանել «Ծիծաղի արքա»: (Վախճ. 1998թ.-ին):

հունվար 29 Երևանի առաջին բանանասիրական ֆակուլտետի հանդիսավոր բացումը:

փետրվար 23 Ջնյունահայուն վախճանվեց անվանի հրապարակախոս և թարգմանիչ Գրիգոր Զիլինկիրյանը: (Ծնվ. 1833թ.-ին):

մարտ 23 Մոսկվայում վախճանվեց հայ բանաստեղծ, արձակագիր Հովհաննես Թումանյանը: (Ծնվ. 1869թ.-ին):

ապրիլ 16 ՀԽՍՀ ժողկոմխորհուրդը որոշում է Խորհրդային Հայաստանի պետկինո (Հետազայում Հայկինո) ստեղծելու մասին:

մայիս 5 Լույս է տեսնում ՀԼԿԵՄ Կենտկոմի օրգան «Ավանգարդ» թերթի առաջին համարը:

մայիս 20 Երևանում բացվում է Շահունյանի անվան ջրանցքը:

հուլիս 12 ՀԿ(Բ)Կ Կենտկոմին կից ստեղծվում է ՀԿ(Բ)Կ պատմության բյուրո՝ Կուսպատը:

սեպտեմբեր 9 Մոսկվայում բացվում է Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի հայկական տաղավարը:

նոյեմբեր 20 Երևանում բացվում է նախկին շարքային դաշնակցականների համահայաստանյան ինքնալիկվիդացիոն համագումարը:

դեկտեմբեր 1 Երևանում բացվում է Հայաստանի պետական կոնսերվատորիան:

1924 հունվար 26 Ծնվեց հայ բանաստեղծ, մշակութային գործիչ, գրականագետ Պարույր Սևակը: (Սպանվեց խորհրդային գաղտնի ոստիկանության կողմից 1971թ.-ին):

հունվար 31 ԽՍՀՄ խորհուրդների II համագումարում հաստատվում է ԽՍՀՄ սահմանադրությունը:

փետրվար 26 ԽՍՀՄ Կենտգործկոմի որոշմամբ Ալեքսանդրապոլ քաղաքը վերանվանվում է

Լենինական:

մարտ 15 Գործարկվում է Երևանի բանբակազտիչ գործարանը:

մարտ 19 Ծնվեց հայ դերասանուհի Վարդուհի Վարդերեսյանը:

մայիս 22 Ծնվեց հայազգի ֆրանսիացի երգիչ, կոմպոզիտոր Շառլ Ազնավուրը:

օգոստոս 30 Կազմակերպվում է Հայաստանի գյուղատնտեսական կոոպերացիան՝ Հայգյուղկոոպը:

հոկտեմբեր 22 Երևան է ժամանում նշանավոր կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանը:

նոյեմբեր 2 Հրապարակվում է Երթաղխորհրդի որոշումը Ա. Թամանյանի կազմած Երևանի նոր հատակագիծը հաստատելու մասին:

նոյեմբեր 7 Շարք է մտնում Ղափանի պղնձաձուլարանը:

1925 փետրվար 23 Ջավախքում ծնվեց վաստակավոր գյուտարար, վաստակաշատ ու առաջնակարգ ինժեներ Մանուկ Աթոյանը: (Վախճ. 1998թ.-ին):

մարտ 22 Կոմունիստական կուսակցության Անդրերկրյանի քարտուղար, Անդրժողկոմխորհրդի նախագահի տեղակալ Ալ. Մյասնիկյանի, Անդրկովկասի արտակարգ հանձնաժողովի (Զեկա) նախագահ Ս. Մոզիլսկու և ԽՍՀՄ փոստ-հեռագրական ժողկոմի ԱՍՖՍՀ լիազոր Գ. Աթաբեկյանի ողբերգական մահը:

ապրիլ 27 Տեղի է ունենում ՀԽՍՀ գիտության և արվեստի ինստիտուտի բացումը Երևանում:

հունիս 18 Երևան է ժամանում Ազգերի լիգային կից Աշխատանքի միջազգային բյուրոյի հանձնաժողովը նշանավոր գիտնական Ֆ.Նանսենի

հունիս 21 Շիրակի ջրանցքի հանդիսավոր բացումը:

սեպտեմբեր 7 Ծնվեց արձակագիր, կինոսցենարիստ Աղասի Այվազյանը:

սեպտեմբեր 30 Ծնվեց կինոռեժիսոր Հենրիկ Մալյանը: (Վախճ. 1977թ.-ին):

հոկտեմբեր 4 Վախճանվեց ականավոր նկարիչ Գևորգ Բաշինջաղյանը: (Ծնվ. 1857թ.-ին):

նոյեմբեր 4 Երևանում բացվում է Հայաստանի պրոլետարական գրողների ընկերության առաջին համագումարը:



(Շարունակելի)

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԻՆ ՀԱՐԱՎՈՐ ՉԷ ՀԱՆԿԱՐԾԱԿԻ ԲԵՐԵԼ



Ձորավարժությունների ընթացքը Սերժ Սարգսյանը գնահատեց նորմալ՝ հավելելով, որ օրերս կիրապարակվի մասնագետների վերլուծությունը, որտեղ էլ կնշվի առաջընթացի մասին: Իսկ գլխավոր շտաբի պետ Միքայել Հարությունյանը նշեց, որ 5-6 տարի կազմակերպվող այս մասշտաբային զորավարժությունները տարեցտարի ավելի բարձր մակարդակ են ապահովում՝ ընդգծելով բանակի պատրաստվածությունը:



Ձորավարժություններում առավել աչքի ընկած զորամիավորումները, հրամանատարներն ու սպաները պարզեւատրվեցին պատվոգրերով եւ ստացան նվերներ:

Մինչ զորավարժությունների վերջին փուլը Հայաստանից Ղարաբաղ մեկնած լրագրողների հետ հանդիպման ժամանակ Ղարաբաղի պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանն ասաց, որ զորավարժությունների սկզբնական փուլերում պաշտպանության բանակը ոչ միայն բարձր պատրաստակամությամբ կատարել է իր առջեւ դրված խնդիրները, այլեւ ունեցել է զորահավաքային ռեսուրսի 100 տոկոսանոց ապահովում: Իսկ դա նշանակում է, որ ՊԲ պատրաստ է պաշտպանելու հայրենիքը առանց երրորդ ուժի ներկայության. «Երրորդ ուժի՝ խաղաղապահների ներկայության անհրաժեշտությունը դեռ չկա, ՊԲ-ն խաղաղապահության լավագույն ուժն է»: Նախարարը նշեց, որ կարելի էր Ադրբեջանի սադրանքների դեպքում վստահ զգալն է, իսկ իրենք դրանում վստահ են. «ՊԲ-ին հանկարծակիի բերել հնարավոր չէ»:

Ինչ վերաբերում է սահմաններին, նախարարի վստահեցմամբ, իրավիճակը հանգիստ է. «Ընդհանրապես սահմաններում մերթընդներթ փոխհրաձգություններ, դիպուկահարների կրակոցներ լինում են, որոնց անգամ շարքային զինվորը հանգիստ է վերաբերվում»: Սեյրան Օհանյանը նկատեց, որ փոխզիջման գործընթացը հասարակությանը դեռ լավ ներկայացված չէ, բայց հաստատ պետք է լինի երկուստեք: Հարցին, թե հավատո՞ւմ է խնդրի

Համոզված է ԼՂՀ պաշտպանության նախարարը

Ապրիլի 12-20-ը Ղարաբաղում անցկացված ԼՂՀ պաշտպանության բանակի (ՊԲ) հրամանատարաշտաբային զորավարժությունները ցույց տվեցին, որ նախորդ տարիների համեմատ դրանց մակարդակը զգալիորեն բարձրացել է: Ձորամասերի, զորամիավորումների, ինչպես նաեւ մոբիլիզացիոն ռեսուրսների ներգրավմամբ ու համազորային, զորատեսակային ստորաբաժանումների եւ օդային ուժերի մասնակցությամբ անցկացված զորավարժություններին ներկա էին ԼՂՀ նախագահ Արկաղի Ղուկասյանը, Ղարաբաղի եւ Հայաստանի պաշտպանության նախարարներ Սեյրան Օհանյանն ու Սերժ Սարգսյանը, ՀՀ ՁՈՒ գլխավոր շտաբի պետ Միքայել Հարությունյանը եւ զինված ուժերի բարձրաստիճան ներկայացուցիչներ:

կարգավորմանը այս տարում, նախարար Օհանյանը պատասխանեց. «Ամեն ինչ անելու ենք խնդիրը եզրագծին հասցնելու համար, բայց այս տարի կկարգավորվի թե ոչ՝ կախված է բանակցային գործընթացից»:

ԼՂՀ ԲԱՆԱԿԸ ԿԱՐՈՂ Է ՊԱՇՏՊԱՆԵԼ ՉԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՅՄԱՆՆԵՐԸ



ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հրամանատարաշտաբային զորավարությունները ցույց տվեցին, որ ԼՂՀ Պաշտպանության բանակը առանց երրորդ ուժի մասնակցության կարող է պաշտպանել հանրապետության սահմանները եւ կատարել իր առջեւ դրված խնդիրները: Այս մասին հայտարարեց ԼՂՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը ապրիլի 18-ի ասուլիսին:

Ձորավարությունների ընթացքում ստուգվում է նաեւ պահեստազորի մարտական պատրաստակամությունը: Ինչպես նշեց նախարարը, 7 ժամվա ընթացքում պահեստազորը կարողացել է կատարել իր առջեւ դրված խնդիրները, իսկ «դա նշանակում է, որ եթե հանկարծ ինչ-որ աննախադեպ պատերազմական վիճակ լինի, ամբողջությամբ պատրաստ կլինի կանխել հարձակումները»:

Ձորավարություններին որպես դիտորդ ներկա են ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը եւ պաշտպանության փոխնախարար, Ձինված ուժերի գլխավոր շտաբի պետ Միքայել Հարությունյանը:

Ձորավարությունները Լեռնային Ղարաբաղում սկսվել են մեկ շաբաթ առաջ: Ապրիլի 19-ին անցկացվեց զորավարությունների ավարտական մասի դիտում:

Աշխարհաքաղաքական սերիալը Լեռնային Ղարաբաղի շուրջ շարունակվում է

Սթնուղորտը մեր տարածաշրջանում շիկանում է օր օրի: Իրադարձություններն ընթանում են գրեթե տիեզերական արագությամբ: Քիչ պակաս արագությամբ տարածաշրջան, մասնավորապես՝ Երեւան եւ Բաքու են այցելում ԱՄՆ-ի, Եվրամիության եւ Ռուսաստանի բարձրաստիճան ներկայացուցիչները:

Քննարկվող հարցերի շրջանակը, փաստորեն, նույնական է՝ «սառեցված» հակամարտությունների կարգավորում, տարածաշրջանային կայունության ու անվտանգության հիմնախնդիրներ, էներգետիկա եւ, իհարկե, Իրան: Բոլոր այդ հարցերը քննարկվելու են ապրիլի վերջին նախատեսված՝ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի՝ ԱՄՆ կատարելիք այցի ընթացքում:

Շատ փորձագետներ համակարծիք են, որ Վաշինգտոնը փորձում է Բաքվին ներքաշել ակտիվ կոալիցիայի մեջ եւ համաձայնության հասնել Ադրբեջանի տարածքը Իրանի դեմ գործողությունների ընթացքում օգտագործելու հարցում: Բաքվում տարածվում են խուճապային տրամադրություններ: Օրըստօրե մեծանում է արտագաղթողների թիվը Իրանից, ովքեր փորձում են տներ ու բնակարաններ ձեռք բերել Ադրբեջանում, հիմնականում՝ մայրաքաղաքում:

Բաքվում զգուշանում են, որ Իրանի դեմ ԱՄՆ-ի ուժային ծրագրերի իրականացման դեպքում ԱՀ կհորդան ադրբեջանական ծագման միլիոնավոր իրանցիներ: «Բնակչության այդպիսի կտրուկ ավելացմանը չի դիմանա ադրբեջանական տնտեսությունը,- համարում են որոշ փորձագետներ Բաքվում:

Սակայն այնտեղ էլ առավել վախենում են Իրանի՝ Ադրբեջանի օբյեկտներին միտված հրթիռային հարվածներից: Շատ փորձագետներ կարծում են, թե Ադրբեջանին, չնայած ձեռնարկվող հնարքներին, չի հաջողվի խուսափել առարկայական մասնակցությունից Իրանի դեմ ենթադրվող գործողություններից:

Ուրիշներն էլ համարում են, թե «Իլհամ Ալիևը Վաշինգտոն է գնում ոչ թե որպեսզի Ձորջ Բուշի հետ

միասին Թեհրանից «արձնելու» սցենարներ մտածեն, այլ ավելի շուտ՝ որոշելու վերադարձված Ղարաբաղի գինը»: «Ի դեպ, հարցի գինը հայտնի է. Ղարաբաղը հակաիրանյան պատվարի դիմաց: Գինը բարձր է: Բայց մեր մարդիկ առեւտուր անել կարող են», - գրում է Բաքվի «Ձերկալո» թերթը:

Հայաստանի ԱԳՆ ղեկավար Վարդան Օսկանյանը իսպառ բացառում է նման առեւտրի հնարավորությունը: Ղա, նրա խոսքերով. «ԱՄՆ-ի ոճը չէ, եւ, բացի այդ, չի կարող հանգեցնել որեւէ դրական բանի: Չի կարելի ասել, թե Ալիեւը Վաշինգտոն է հրավիրվել միայն «իրանյան հարցի» պատճառով: Կարծում եմ՝ կան շատ ուրիշ խնդիրներ, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի հարցը:

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները պետք է Ադրբեջանի հետ աշխատեն՝ մերձեցնելու համար մեր մոտեցումները, քանզի Ադրբեջանը, ի տարբերություն Հայաստանի, դեռ գտնվում է ծայրահեղ դիրքերում, շատ քիչ է փորձում զիջումների գնալ, ինչի մասին կարելի է դատել Ալիեւի հայտարարություններից», - ասաց ՀՀ ԱԳՆ ղեկավարը: Բայց շատ ավելի հատկանշական է հայ նախարարի մեկ ուրիշ արտահայտությունը:

Ապրիլի 18-ին հանդես գալով Հայաստան-Եվրամիություն խորհրդարանական համագործակցության հանձնաժողովի նիստում՝ Վ. Օսկանյանը հայտնեց, որ եթե նախկինում Երեւանը հայտարարում էր, թե հակամարտության հետեւանքների վերացման հետ կապված հարցերը կքննարկի միայն Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի որոշումից հետո, ապա այսօր հայկական կողմը գնացել է «լուրջ փոխզիջման» եւ ունի քիչ այլ դիրքորոշում:

«Եթե Ադրբեջանը համաձայնում է այն փաստին, որ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն ունի ինքնորոշման իրավունք, որը կարող է իրականացվել ոչ անմիջապես, այլ ապագայում, հայկական կողմը պատրաստ է այսօր արդեն քննարկել հակամարտության հետեւանքների վերացման հետ կապված հարցերը՝ տարածքներ, փախստականներ եւ անվտանգության այլ հարցեր», - ասաց Վարդան Օսկանյանը:

Ապրիլի սկզբին ԱՀ ԱԳՆ ղեկավար Էլմար Մամեդյարովը հայտարարեց. «ԱՄՆ-ը ներկայացրել է նոր հետաքրքիր առաջարկներ Պրահայի՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման

գործընթացը շարունակելու մասին»:

Պաշտոնական Բաքուն դրանք կվերլուծի եւ իր վերաբերմունքը կարտահայտի ապրիլի 18-ին ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկյան համանախագահ Սթիվեն Մանի՝ տարածաշրջան կատարելիք այցի ընթացքում: Պրն Մանը Երեւանում կլինի ապրիլի 20-21-ը: Ապրիլի 28-ին Ադրբեջանի նախագահը կմեկնի ԱՄՆ:

Ռուսաստանը այդ կարուսելում նշմարվեց ՌԴ արտգործնախարարի տեղակալ Գրիգորի Կարասինի աշխատանքային այցով Երեւան:

Հայաստանի նախագահի եւ ԱԳՆ ղեկավարի հետ հանդիպումների արդյունքներով Մոսկվան հայտարարեց, թե «փոփոխվող մթնոլորտում Անդրկովկասում եւ նրան հարող տարածաշրջանում ռուս-հայկական փոխգործակցությունը անվտանգության ու կայունության ապահովման նշանակալի գործոն է այստեղ»: Ի դեպ, Գ. Կարասինի հովանավորությամբ Երեւանում տեղի ունեցավ Վրաստանում, Հայաստանում, Ադրբեջանում ու Թուրքիայում Ռուսաստանի դեսպանների տարածաշրջանային խորհրդակցությունը:

«Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորում» կոչվող աշխարհաքաղաքական սերիալը շարունակվում է...

Գայանե ՄՈՎՍԵՍՅԱՆ

Հայոց ցեղասպանություն. 91 տարի առանց զղջման

Օրերս Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությունը հայտարարեց, որ ուսումնասիրողների ու անհատների համար այլեւս բաց են համարվելու երբեւէ իր իսկ կողմից չժխտված հրեական ողջակիզման վերաբերյալ արխիվային փաստաթղթերի հավաքածուները: Իսկ ժամանակակից Թուրքիան, չնայած ազատականացման ու եվրոպականացման մակերեսային այլափոխություններին, ցայսօր էլ չընդունելով Օսմանյան կայսրության իրականացրած ծանրագույն ոճիրը՝ հազար փակի տակ է պահում Հայոց ցեղասպանության վերաբերյալ արժեքավոր արխիվային փաստաթղթեր: Սակայն դա սոսկ խնդրի մի մասն է...

Թուրքիայում արդեն մի քանի տարի ընթացող զարգացումները կարծես պիտի հանգեցնեն այն եզրակացության, որ ԵՄ անդամության բանակցությունների ճանապարհին եւ ընթացքում պաշտոնական Անկարան լուրջ ու անշրջելի բարեփոխումներ է իրականացնում՝ բախվելով հաճախ հասարակական լուրջ դիմադրությանը: Թվում է, թե այսօրինակ փոփոխությունները պիտի ազատականացնեին քննարկումների դաշտը՝ հնարավորինս լսելի դարձնելով Հայոց ցեղասպանության վերաբերյալ պաշտոնականից տարբերվող տեսակետները, սակայն իրականում թուրքական հասարակությունը, մտավորականության մեծամասնությունը, լրատվամիջոցները թշնամաբար են արձագանքում Ցեղասպանության որեւէ հիշատակությանը:

Բացառվում է որեւէ ակնարկ թուրքական պետության ուրացության քաղաքականության փոփոխության ուղղությամբ անգամ: Իրականում, եթե ականջալուր լինես թուրքական հեթոթների, այն կարծիքը կկազմես, թե Օսմանյան կայսրությունը հայ ազգի համար դրախտավայր էր, այնինչ հենց թուրքական լուծն է թելադրել հայոց քաղաքական, տնտեսական, մշակութային եւ բարոյահոգեբանական նահանջը: Թուրքական պատմագրության վրա հիմնված ուսումնասիրությունները կարդացող անպատրաստ ընթերցողը երբեք էլ չի հասկանա, որ Օսմանյան տիրապետությունը հայերի ու բոլոր ոչ մահմեդականների իրավազուրկ ու անազատ գոյության, քաղաքական եւ ազնվականական ընտրախափի ոչնչացման, ժանրագույն շահագործման, բռնագաղթի, մշակութային համատարած ամլության, բռնի կրոնափոխության օրհասական ժամանակաշրջան է եղել: Հայկական հարցը թուրքերը ներկայացնում են լիովին խեղաթյուրված: Հանդգնված ենք, որ արդի դասագրքերը չեն էլ հիշատակում, որ հայերն ունեցել են պետականության հազարամյա ավանդույթ, ամուր ազգային ինքնագիտակցություն, տասնհինգ դար շարունակ գործածում են ուրույն գիր եւ այլն:

Ինչպես եւ 9 տասնամյակ առաջ, այսօր էլ թուրքերը առանձնապես ծանր են տանում այն, որ իրենց իրականացրած ոճրի մասին խոսում է համաշխարհային հանրությունը, մասնավորապես, մարդկության դեմ գործած հանցանքը ներկայացվում է զանգվածային լրատվության միջոցներով: Ապրիլի 17-ին, երբ ԱՄՆ Հանրային հեռարձակման ծառայությունը PBS եթեր էր հեռարձակել Էնդրյու Գոլդբերգի «Հայոց ցեղասպանությունը» ֆիլմը, թուրքական լրատվամիջոցների ու պետական մարմինների արձագանքները չուշացան: Ըստ

թուրքական լրատվամիջոցների՝ մոտավորապես մեկ ժամ տեւողությամբ ֆիլմը պատմում է, որ հայերի զանգվածային բնաջնջումը Թուրքիայում սկսվել է դեռ 1890-ականներին՝ սուլթան Աբդուլ Համիդի օրոք: Թուրքական «Վաթանը» նշում է, թե իբր միակողմանի կինոնկարում ներկայացված է այն, որ 1915 թ. տեղահանության ընթացքում հայերին ոչնչացրել են կենտրոնական իշխանության որոշմամբ եւ հրամանով: Երիտթուրքերի ղեկավարներից Էնվեր, Թալեաթ եւ Ջեմալ փաշաները դատապարտվել էին մահվան ու ընդունել էին դատարանի կողմից իրենց առաջադրված մեղադրանքը ցեղասպանություն իրագործելու մասին: Լրատվամիջոցը ֆիլմն անվանում է միակողմանի, քանզի տեսակետ հնչեցնող թուրքերի՝ ԱՄՆ Միենտոտայի համալսարանի դասախոս Թաներ Աքչամի, Միչիգանի համալսարանից Ֆաթմա Մյուգե Գյոչեքի, պատմաբան Հալիլ Բերքթայի դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցում տարբերվում է թուրքական պետության պաշտոնական տեսակետից: Թուրք լրատվամիջոցներին զայրացրել են կինոնկարում տեղ գտած մի շարք փաստեր ու իրողություններ, մասնավորապես նրանք, որոնցում ներկայացվել է թուրքական իշխանությունների ցեղասպան գործելաճը, երբ Թուրքիայի շարքային քաղաքացիներ պատմել են Ցեղասպանության վերաբերյալ իրենց փոխանցված հուշեր: Ամենեւին տարօրինակ չէ, որ հեռարձակումից անմիջապես հետո PBS-ի ղեկավարությանը նամակով դիմել է ԱՄՆ-ում Թուրքիայի Հանրապետության դեսպան Նաբի Շենտոյը: Դեսպանի զայրացական նամակում նշվում է, թե «Հայոց ցեղասպանություն» վերտառությունը կրող ծրագիրը «ներկայացնում է համաշխարհային պատմության ողբերգական ու վիճելի շրջանի վերաբերյալ միակողմանի մոտեցում», ու «չնայած ծրագրի պնդումներին՝ հայկական ցեղասպանության վերաբերյալ հայտարարությունները երբեք պատմականորեն կամ իրավաբանորեն չեն հաստատվել»:

Թուրքական դիվանագիտական ներկայացչությունը կրկին պատմական դարակազմիկ հայտնագործություն է անում, ինչը, հավատացնում ենք, տարօրինակ չէ այն պետության համար, որն անգամ դպրոցական դասագրքերում ու ծրագրերում ճգնում է Եղեռնը ներկայացնել անփոփոխ սցենարով. ռուսների ձեռքին խաղալիք դառնալով՝ հայերն սկսեցին կոտորել թուրքերին, եւ օսմանյան կառավարությանը ոչինչ չէր մնում՝ հայերին արտաքսելուց զատ: Ուրեմն եւ՝ դեպի Սիրիա տարագրության ճանապարհին գոհված հայերի համար թուրք ազգը պատասխանատու չէ: Ավելին, տեղի ունեցածը շատ

նորմալ է այն պետության համար, որտեղ այլ պետության դիվանագիտական փաստաթղթեր հրատարակող կազմակերպությանը կարող են դատի տալ:

Ոչ ոք թուրքիայում չի զարմանում, որ ընդդիմադիր Հանրապետաժողովրդական կուսակցության անդամ, նախկին դիվանագետ Շյուքրյու Էլեքդաղը դատական հայց է ներկայացրել թուրքիայում «Կապույտ գրքի» հրատարակիչների դեմ՝ վերջիններից պահանջելով 20 հազար նոր թուրքական լիրա: Նոր թուրք դեսպանը Էլեքդաղից քիչ է տարբերվում իր հակահայ կեցվածքով ու պահվածքով: Վերադառնալով ԱՄՆ թուրքական դեսպանի բողոքի հայտարարությանը՝ անդրադառնանք հայ-թուրքական հարաբերությունների ներկա վիճակի մասին նրա արած հայտարարություններին: Խնդրո առարկայի առթիվ թուրք դիվանագետը գրում է. «Անցած տարի վարչապետ Էրդողանը Հայաստանի նախագահ Քոչարյանին աննախադեպ առաջարկ արեց՝ ստեղծելու միասնական պատմական հանձնաժողով՝ քննարկելու իրողությունները: Սա կարելու առաջարկ էր, որը դեռ պատասխանի է սպասում»:

Փաստորեն, թուրքերի այս հայտարարությունը նույնպես հստակ հաղորդագրություն է պարունակում: Թուրքիան չի հրաժարվում Հայաստանի հետ հարաբերություններ հաստատելու նախապայմաններից եւ ոչ մեկից: Ավելին, որեւէ հետքայլ կատարելու ցանկություն անգամ չի ցուցաբերում: Սեփական սխալները փնտրելու, գտնելու եւ բացթողումները հաղթահարելու փոխարեն՝ թուրքերը քավության նոխազ են փնտրում, սակայն իրենք են ամերիկացիներին մեղադրում, որ ամերիկյան հեռուստաընկերությունը փնտրել ու գտել է քավության նոխազ, որին մեղադրել է «հազարավոր մարդկանց կյանքեր խլած ողբերգության համար»: Թուրքական պետությունը վավերագրական ֆիլմն անվանում է կեղծիք, իսկ գեղարվեստական «Արարատը»՝ քարոզչություն: Ի դեպ, կանադահայ ռեժիսոր Ատոմ Էգոյանի կինոնկարին այդ պիտակը փակցվել էր դեռ տարիներ առաջ, երբ այն անգամ չէր էլ նկարահանվել, սակայն կինոնկարի շուրջ աղմուկը սաստկացավ այն բանից հետո, երբ թուրքական «Թյուրք քանալը» հեռարձակեց «Արարատի» խմբագրված տարբերակը: Թուրք հանրահայտ լրագրող Մեհմեթ ալի Բիրանդին, սակայն Ֆիլմը կարծես, դուր չէր եկել: Ինչպես նշում է «Թըրքիշ դեյլի նյուսը», անցած հինգաբթի ներկայացնելով «Արարատը»՝ թուրքերը կարողացան հաղթահարել եւս մի հայկական տաբու: Իր հողվածում դատողություններ անելով կինոնկարի

գեղարվեստական ու պատմական արժեքի մասին Բիրանդը նշում է, որ ամենից ավելի կարելու է այն, որ ցուցադրությունից հետո անգամ թուրքերը «չեն հավատում Հայոց ցեղասպանության պնդումներին»: Նույն իրադարձության համատեքստում «Ռադիկալը» անդրադառնում է հիշողության ու պատմության հիմնախնդրին՝ հասարակության ուշադրությունը նորից կենտրոնացնելով մի քանի ֆրանսիացի պատմաբանների նախաձեռնության վրա, որոնք փորձում էին հասնել Ազգային ժողովի ընդունած մի շարք օրենքների չեղյալ հայտարարմանը: Հիշեցնենք, որ այդ օրենքների թվում է նաեւ Հայոց ցեղասպանությունը ճանաչող նորմը: Խոսելով պատմության ու հիշողության երկվությունների մասին՝ հողվածում նշվում է, որ, ի տարբերություն հիշողությունների, որոնք սուբյեկտիվ ընկալումների ձեւ են, պատմությունը գիտական մեթոդներով օժտված առարկա է, որն ուսումնասիրում է անցյալի իրողությունները: Ըստ հողվածագրի՝ «Արարատի» դեպքում գործել է ոչ թե պատմությունը, այլ հայերի՝ թուրքերին որպես անմարդկային մարդասպաններ ներկայացնելու փոխադրյալ հիշողությունը: Թե ով է տառապում հիշողության անկումներով՝ թող ասեն թուրքերը, մանավանդ երբ կարողանում են «Յենիչաղ» թերթի առաջին էջում «Հայերից ավելի վատն են» վերտառությամբ առաջնորդողում անդրադառնալ ամերիկացիների գործած դաժանություններին Իրաքում՝ նույնիսկ նշելով, որ հայերը նույն արարքներն անում էին առաջին աշխարհամարտի տարիներին: Այդպիսին է թուրքերի մոտեցումը. զոհի ու դահիճի միջեւ հավասարության նշան դնելը որեւէ խնդիր թուրքական հասարակության հավաքական խղճի առաջ չի դնում: Ավելին, եկել է պատմությունն ավելի աղճատելու թուրքական ժամանակը: Դեռ անցած տարի աշնանը հայտնի դարձավ, որ Քայսերի Էրչիեշ համալսարանում պիտի կազմակերպվեր «Համակեցության արվեստը Օսմանյան հասարակությունում. հայ-թուրքական հարաբերությունները» գիտաժողովը, որը պիտի կայանա ապրիլի 20-22-ը: «Կայսերի գյունդեն» պարբերականը հաղորդում է, որ գիտաժողովին մասնակցելու են 125 գիտնականներ թուրքիայի 45 տարբեր հաստատություններից, սպասվում է նաեւ Պոլսի հայոց պատրիարք Մութաֆյանի, ինչպես նաեւ արտգործնախարար Գյուլի ու մշակույթի եւ զբոսաշրջության նախարար Քոչի մասնակցությունը: Երկօրյա «գիտական» ներկայացման մասնակիցների աշխարհագրությունը նույնպես լայն է՝ Նախիջեւան, Ադրբեջան, Թաթարստան, Հնդկաստան: Կազմակերպիչների կարծիքով՝ գիտաժողովը

աննախադեպ միջոցառում է՝ միտված հայ-թուրքական երկխոսության հաստատմանը: Ահա այսպես է թուրքական հասարակությունը հանգստացնում խիղճը եւ 91 տարի շարունակ կարողանում է ապրել առանց զրջման...

Արամ ԱՆԱՆՅԱՆ

ՖՐԻՏՅՈՒՆ ԼԱՆՍԵՆ

«Նորվեգիան ծնեց ու մեծացրեց նրան, իսկ աշխարհը՝ կորցրեց»: Ֆրիտյոֆ Նանսենի մահվան կապակցությամբ հնչած այս խոսքերը վաղուց են շրջում մարդկության շուրթերին: Ո՞վ էր բացառիկ հնարավորություններով օժտված այս անձնավորությունը, որի թողած հսկա ժառանգությունը վերաբերում է գիտական բազմաթիվ նվաճումների, աշխարհի վրա խաղաղության հաստատման նախաձեռնությունների, մարդկային բարոյական բարձրարժեք նորմերի հաստատմանը, փոքր ազգերի ճակատագրական պահերին սատարելուն: Հենց այս բացառիկ անձնավորության կյանքին ու գործունեությանն է նվիրված Ֆերլիքս Բախչինյանի «Հայ դատի հենասյունը» մենագրությունը, ի նշան սիրո, գնահատանքի ու երախտագիտության մի անհատի նկատմամբ, ով ահավոր Եղեռնից մազապուրծ երեք հարյուր քսան հազար հայերի համար նանսենյան անձնագրերով ապահովեց ապրելու իրավունքը:

«Իմաստուն մարդիկ պիտի ճառագեն իբրեւ երկնականարի լուսատուներ, իսկ արդարներից շատերը, առավել եւս՝ իբրեւ հավիտենական աստղեր»: Աստվածաշնչյան մարգարեի այս խոսքերի լույսով փնտրելով Ֆրիտյոֆ Նանսենի հետ հոգեւոր շփման եզրեր, Ֆելիքս Բախչինյանը գնացել է այդ շփմանը, որից ծնվել են նրա մտորումները գրեթե մեկ դար ու կես առաջ մեծ նորվեգացու մասին: Ներաշխարհային եւ մտավոր կարողություններով օժտված բացառիկ անձնավորություն, որ գիտնական էր, բեւեռախոյզ, հասարակական-քաղաքական գործիչ, մարդկության արդար ու խաղաղ կեցության համար մղվող պայքարի մարտիկ:

Ֆելիքս Բախչինյանի մենագրությունը նվիրված է գիտական իմացության եւ ոգեղեն աշխարհների միասնականացման բարձրակետին գտնվող մի անձնավորության կերպարի ուսումնասիրությանը, որի կյանքի ու գործունեության յուրաքանչյուր մանրամասներից քաղելու հարուստ պաշարներ կան

անհատի մարդայնացման հարաճուն ընթացքը պահելու համար:

Մարդկային արժանապատվության նորմերն ապահովող բազմաթիվ դրույթներ կան Ֆ. Բախչինյանի մենագրության էջերում, կապված մեծ նորվեգացու կյանքի ու գործունեության տարբեր պահերի, տարբեր բնագավառների հետ:

«Մերձավորին սիրելը միակ ռեալ հնարավոր քաղաքականությունն է»: Նանսենյան այս ձեւակերպման հիմքերը գտնելու համար մենագրության հեղինակը կանգ է առնում նրա՝ քրիստոնեական կանոնակարգումների նկատմամբ ունեցած ընդամենը հարգալից վերաբերմունքի վրա: Հետո փորձում պարզել, թե ինչ էր նշանակում մերձավորը Ֆրիտյոֆ Նանսենի համար, եւ ինչպես էր սառցաբեկորներում քրտնաջան հետազոտությունների ընթացքում մերձավորի նկատմամբ ունեցած սիրո գաղափարը վերաճում ընդհանրապես մարդ անհատի համար գիտական ու բարոյական բարձրակետ ապահովելու նրա նվիրումին:

«...Այրեցեք ձեր թողած նավերը, քանդեցեք ձեր հետեւում կանուրջները: Միայն այդ դեպքում ձեզ եւ ձեր ուղեկիցների համար այլ ելք չի մնա, քան միայն առաջ շարժվելը»: Նանսենյան այս խոսքերի վերլուծումներով հեղինակը բացում է պայքարով առաջանալու, հաղթանակի համար մարդկային ոգին անկոտրում պահելու խորհուրդը:

Վերջապես ո՞վ էր մեզ՝ հայերիս համար Ֆրիտյոֆ Նանսենը: Մենագրության հեղինակն այս խնդրին մոտենում է երախտագիտական խոր զգացումներով դեպի հայոց իրավունքների անշահախնդիր պաշտպան այս անձնավորությանը: Անդրադարձը դեպի «Խաբված ժողովուրդ» աշխատության հեղինակը, անդրադարձ է Հայ դատին, ձեռքի տակ ունենալով Ազգերի ընկերակցությունում ի նպաստ հայ ժողովրդի աշխատող մեծ մարդասերի գրառումները:

Ֆ. Բախչինյանը խոհական, հոգեբանական մտորումներով վերաիմաստավորում, ամբողջացնում է Ֆ. Նանսենի կերպարը եւ նրա գործունեության նշանակությունն իբրեւ գիտնականի, մշակութային ու հոգեւոր բնագավառներում խոր վերլուծությունների հեղինակի, հասարակական-քաղաքական գործունեության մեջ մարդասիրական նորմերի ակտիվ պաշտպանի եւ իբրեւ հայ ժողովրդի ազնիվ բարեկամի ու նվիրյալի:

ՍԵՐՊԵՅ ԳՆԱՆՅԱՆ

**ԽԱՐԿՈՎԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ
ԿԱՌՉԱԾ Է ՄՆՈՒՄ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻՆ**



Ուկրաինայում գործող խոշորագույն ազգային համայնքներից մեկն է Խարկովի մարզային հայկական ազգային համայնքը, որի կազմում հաշվառված է մոտ 10 հազար մարդ: Այն գործում է արդեն 20 տարի, վերջին հինգ տարվա ընթացքում համայնքը կառուցել է ավարտին է հասցրել Ս. Հարություն եկեղեցու շինարարությունը, որը միակն է ամբողջ Արևելյան Ուկրաինայում, որը կառուցվող հայկական մշակույթի կենտրոնի նախագծի մի մասն է՝ եկեղեցով, հյուրանոցով և այլն, որի բացումն ու օծումը կատարվեց Ամենայն հայոց կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին երկրորդի օգնությամբ և օրհնությամբ: Ս. Հարություն եկեղեցու հանդիսավոր բացումն ու սուրբ օծումը տեղի է ունեցել 2004 թվականի օգոստոսին, որն էլ ներառվել է Խարկով քաղաքի 350-ամյակին նվիրված եռօրյա ծրագրի մեջ:

Խարկովի ազգային համայնքը կատարում է մեծ ու բազմակողմանի աշխատանք: Համայնքի անդամների համար լուծվում են բազմապիսի անձնագրային խնդիրներ, համայնքը ակտիվ համագործակցում է Հայաստանի, Ուկրաինայում գործող մյուս բոլոր համայնքների հետ:

- Իր գործունեությամբ ու ծավալով բավականին աշխատանք է տանում համայնքը, հետ նայելով հինգ տարիների անցած ճանապարհին, ինչ կասեիք հեռանկարների մասին, հարցնում են մարզային հայկական համայնքի նախագահ պրն Սամվել Խանդամիրյանին:

- Ես գտնում եմ, որ հինգ տարիների արդյունքը չէր լինի այսքան տպավորիչ, եթե չլիներ համայնքի անդամների հավաքական ուժը, որը միախմբված կարողանում է ստեղծել ու պահպանել հայկական օջախ օտար հողում: Իսկ այսօրվա կարեւորագույն խնդիրներից մեկը մշակութային կենտրոնի կառուցումն է, որն էլ ավելի կհամախմբի խարկովահայությանը:

Համայնքն իր գործունեության ու համառ աշխատանքի ջանքերով Ուկրաինայի նման բազմազգ պետության ներքո գործելով հանդերձ, մշակութային հարթակում կարողանում է պահպանել իր մշակույթն ու

լեզուն: Կարճ ժամանակամիջոցում համայնքի ուժերով ստեղծվել է հայկական կիրակնօրյա դպրոց, որը հինգ տարեկան է, որտեղ գործում է «Արմենիա» երգի եւ պարի համույթը: Այն արժանացել է բազմաթիվ պատվոգրերի եւ մեծ հաջողությունների է հասել: Համայնքի գործունեության եւ կատարված աշխատանքների մասին Հայաստանի եւ Խարկով քաղաքի նորություններին կարելի է ծանոթանալ համայնքի «Կանչ» ամսագրի էջերում: Ունենք նաեւ երգչախումբ:

Համույթը հիսուն հոգուց բաղկացած կոլեկտիվ է, որտեղ ուսուցանվում է հայկական երգն ու պարը: Համույթը մասնակցում է բազմաթիվ փառատոների, գրավում առաջին եւ երկրորդ տեղեր: Իմ այն հարցին, թե ինչ հեռանկարներ ունի համույթը, համույթի կազմակերպիչ Նոնա Միրզաբեկյանը պատասխանեց.

- Չնայած այն ամենին, որ մասնակցում ենք բազմաթիվ փառատոների, ելույթ ենք ունենում Ուկրաինայի տարբեր քաղաքներում, հրավերներ ենք ստանում արտասահմանյան երկրներից, միեւնույն է, կարելի է ասել, այն հանգամանքը, որ անմիջական կապ չկա հայրենիքի հետ, երեխաները մոտիկից չեն առնչվում հայկական մշակույթի հետ, թողնում է իր ազդեցությունը: Խիստ կարիք ենք զգում տարազների ձեւավորման խնդրում եւ մեր՝ բոլորիս երազանքն է գոնե մեկ անգամ հայրենի հողում հանդես գալ ու ներկայացնել խարկովահայության ոգին եւ ուժը:

Քաղաքի մշակութային կյանքի վրա մեծ ազդեցություն են գործում մշակութային այնպիսի գործիչներ, ինչպիսիք են Պուլշկինի անվան դրամատիկական թատրոնի տնօրեն եւ գլխավոր ռեժիսոր Ա. Ս. Բարսեղյանը, Սլաբաժանկա նվագախմբի դիրիժոր Շ. Գ. Պալտաջյանը:

Խարկովի համայնքի անդամները ուշադրություն են դարձնում ոչ միայն քաղաքի մշակութային կյանքին, այլեւ պետական օղակներում, քաղաքական ասպարեզում մեծ դեր են խաղում:

Ապրելով ու ստեղծագործելով օտար հողում, հայրենիքից հեռու, սակայն մայրենին սրտում, պահպանելու ենք հայոց բառն ու բանը իբրեւ ազգային անփոխարինելի ժառանգություն.

*Սուրբ Հարություն վանքի խաչով,
«Հայր մեր»-ը լուռ աղոթելով,
Մեր վերքերով եւ երգերով՝
Քայլելու ենք խոր դուռ բացող
Հավերժության ճանապարհով:*

ՄԵՏԱԸՍՅԱ ՍՎԱԳՅԱՆ,
*Խարկովի մարզային ազգային համայնքի
նախագահի օգնական, Խարկով*